ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- մայիսի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հունվարի 5-ի №9Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ճշգրտվել է «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայով ամրագրված արտադրության ժամանակահատվածը, իսկ որոշման 2-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է երկամսյա ժամկետում՝ մինչև 2022 թվականի մարտի 7-ը, Հանձնաժողով ներկայացնել Կայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված կետերով (նիշերով) ջրօգտագործման թույլտվություն, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում համապատասխան հիմնավորումներ իրավասու մարմնից,

բ) Որոշման 2-րդ կետով սահմանված պարտավորությունը Որոշմամբ սահմանված ժամկետում՝ այն է մինչև 2022 թվականի մարտի 7-ը, Ընկերության կողմից չի կատարվել, ինչի արդյունքում նշված փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի մարտի 14-ից հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 14-ի №ԳԲ/34.1-Մ2-5/788-2022 գրությամբ,

գ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, սույն թվականի ապրիլի 4-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության 2022 թվականի ապրիլի 4-ի №4/10.1.3/4498 գրությունը, որով հավաստվում է, որ Ընկերությանն 2017 թվականին տրված

ջրօգտագործման թույլտվությամբ (անբաժանելի մաս հանդիսացող պայմաններով) ամրագրված ջրառի և ջրահեռացման նիշերի փոփոխություն տեղի չի ունեցել,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է ճշգրտված կետերով (նիշերով) ջրօգտագործման թույլտվության կամ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում իրավասու մարմնից համապատասխան հիմնավորումներ Հանձնաժողով ներկայացնելու Որոշմամբ սահմանված պահանջը, մինչդեռ մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը, վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության գրությունը համապատասխան հիմնավորումներով, և այդ խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն, և Ընկերությունը Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №383Ա որոշմամբ իրեն տրամադրված Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայի գործողության ժամկետում Որոշման 2-րդ կետով նախատեսված պահանջի խախտում չի կատարել: Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշման 2-րդ կետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի մարտի 14-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- մայիսի 2022թ.